հոգոյ՝ հանել զքարեղէնն և դնել զմեղէնն։ Մնոյր զաղբիւրն, որո հոսումն աղտեղացուցանէ զմարդն, և բանայր զներհակս նորա։ Այլ և զսափոր յուսոյն զվերստին աւազանն՝ ջերմեռանդ բխէր. աւծանէր զգլուխն ներքին մարդոյն թափեցելոյն իւղով և աստծով[ա] տընանկաց. և սկիզբն առնէր պահոց ամենայն զգայարանացն, փակելով զպատուհանսն՝ զմուտս մահուն, և զմիտսն պահել ի վեր յեռեալ յարփին՝ և ոչ իջանել ի նիւթականս։ Սանձէր զլեզուն և աղխէր զշրթունսն. ոչ շարժիլ և ոչ բանիլ[բ] ի բանս ունայնս, այլ պարապել միշտ աստուածաշունչ մատենից. յարմարէր զբերանն քնար՝ և զատամունսն լար, զշրթունսն մատունք, և զլեզուն կնտընդոց. և զհոգին խառնեալ ընդ Աստուծոյ հոգւոյն, և լեալ երաժիշտ՝ երգէր քաղցրաձայն զերգս հոգևորս ի փառս սուրբ երրորդութեանն։

Կրթէր անսքաղութեամբ զանձն իւր՝ յոտնաւորութեամբ զցայկ և զցերեկ. ոչ նիրհէր՝ և ոչ ննջէր և ոչ ընկողմանէր ի մահիճսս, [թղ. 13[ա]] այլ յաւրէնս Ցեառն խորհէր։ Ծառ բուսեալ Աստուծոյ ի գնացս Ջրոց[գ] յա-

---

ա. Զկայ Ն. Հ. Բ.։

բ. Փոխ. «բանալ»։

գ. «գրոց» ձեռագրինն k։